ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԽՈՐՈՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ОБЩИНА СЕЛА ХОРОНК
АРМАВИРСКОЙ ОБЛАСТИ

ՀՀ Արմավիրի մարզ, գ. Խորոնք
Հեռ. /10374- 099/03-08-08/0231/6-86-89/

С. Хоронк Армавирской обл. РА
Тел. /10374- 099/03-08-08/0231/6-86-89/

N 20

06 03 2015г

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Ա. Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ է ներկայացվում ՀՀ Արմավիրի մարզի Խորոնք համայնքի ղեկավարի՝ 2015 թվականի փետրվար ամսվա ընթացքում ընդունած որոշումները և արձակած կարգադրությունը:

Առդիր՝ 5 էջ:

Խորոնք համայնքի ղեկավար՝ /Ս.Նահապետյան /

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԽՈՐՈՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-9

Գ.ԽՈՐՈՆՔ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ 2, Հեռ. /0231/ 6-86-89

*10 փետրվարի 2015թ.*

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասով `

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Համայնքի սեփականության ամենամյա գույքագրման նպատակով ստեղծել հանձնաժողով (համաձայն հավելվածի):

2.Հանձնաժողովի գույքագրման արդյունքները ներկայացնել ավագանու նիստի քննարկմանը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` / Ս.Նահապետյան/

*10 փետրվարի 2015թ.*

գ. Խորոնք

Հավելված

ՀՀ Արմավիրի մարզի Խորոնք գյուղական
համայնքի ղեկավարի 2015 թվականի
փետրվարի 10-ի N 9 որոշման

ԿԱԶՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

*Հանձնաժողովի նախագահ՝* Գ.Ասատրյան

*անդամներ՝* Ս.Բաբայան
Լ.Ավաքյան
Ս.Խաչատրյան
Ա.Մայիլյան
Մ.Ջիվանյան
Է.Խաչատրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ԽՈՐՈՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ
# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-10

---

Գ.ԽՈՐՈՆՔ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ 2, Հեռ. /0231/ 6-86-89

*16 փետրվարի 2015 թ.*

## ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք գյուղական համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 31-ի թիվ 7 նիստի թիվ 1 որոշումը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնքի վարչական տարածքում գտնվող տնամերձ հողամասը /կոդ՝ 04-050-054-014/ հասցեավորել է.Սրապիոնյան 27 :

2.Սույն որոշումը պետական գրանցման համար ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային սպասարկման գրասենյակ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ / Ս.ՆԱԶԱՐԵՏՅԱՆ /

*16 փետրվարի 2015 թ.*

*գ. Խորոնք*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԽՈՐՈՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-11

Գ.ԽՈՐՈՆՔ ՄԱՅԱԹ-ՆՈՎԱ 2, Հեռ. /0231/ 6-86-89

*24 փետրվարի 2015 թ.*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության N633-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2011 թվականի մայիսի 6-ի N164 որոշման 5-րդ կետը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Արմավիրի մարզի Խորոնք համայնքի քաղաքացիական պաշտպանության լրամշակված պլանը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած համարել 2013 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 40 որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ / Ս.ՆԱԶԱՊԵՏՅԱՆ /

*24 փետրվարի 2015 թ.*

*գ. Խորոնք*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԽՈՐՈՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Գ.ԽՈՐՈՆՔ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ 2, Հեռ. /0231/ 6-86-89

ՀՀ Արմավիրի մարզի Խորոնք
գյուղական համայնքի ղեկավարի

*01 փետրվարի 2015 թ.*

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ N 3

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով,հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 13.07.2006 թվականի «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու հարցը հաստատելու մասին» թիվ 1002-Ն և 05.03.2009 թվականի թիվ 228-Ն որոշման 4-րդ կետը,պաշտոնի անձնագրի 5-րդ կետը՝

**Կարգադրում եմ.**

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնքի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /ծածկագիր 3.1-1/ Վարդանուշ Վալերիկի Կարապետյանին 6 ամիս ժամկետով վերապահել գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնը,որպես տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված փոխարինող համայնքային ծառայող:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ / ՍԱՐԳԻՍ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ/

*01 փետրվարի 2015 թ.*

գ. Խորոնք